

ՍԻՐԱՆՈՒՇ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, ԳԱԱ ԳԻ

ՊԱՐԵՓԻՆ ԵՊՍ. ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑԸ ԵՒ ՊՐԵՐԻ ՊՅՈՒՏԻ՝ ԲԱՆՈՒԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Նայոց գրերի գյուտը շուրջ 1600-ամյա հեռավորությունից մեզ ներկայանում է իբրեւ ազգային ինքնաստեղծումի, հայոց հոգեւոր ու մարմնական գոյությունը միտված կերտողական ոգու, աստվածային շնորհի ու Գրի հիշողությամբ Հայրենիքի ու տիեզերական ժամանակի կապն ստեղծելու հայ հանճարի անկրկնելի ստեղծագործություն: Գրերի ստեղծման օրվանից, երբ «հայկականացվեց» Հայոց պատմությունը, եւ Հայաստան մտած «քրիստոնեությունը հայացավ»¹, Հայոց հողն ստեղծել ու պահպանել է հոգեւոր ու նյութական մշակույթի բազմաթիվ վկայություններ՝ զրույցներ, լեզենդներ ու ավանդություններ, բանահյուսական պատառիկներ, մատուռներ, վանքեր ու եկեղեցիներ, խոնարհումի ու խնկարկման սրբազան վայրեր, որ ոչ միայն կրում են պատմական իրադարձությունների ուղիղ հիշողությունը, այլեւ արտահայտում են պաշտամունքի ու պանծացման այն բացառիկ դրսեւորումը, որ հայոց ազգային ինքնագիտակցությունը տվել է Սուրբ Մեսրոպին ու գրերի գյուտին: Այս իմաստով պատմական, սուրբգրային հիմունքների մի գեղեցիկ համադրությամբ մեզ է ներկայանում Բալուի եւ հայոց գրերի ստեղծման ավանդապատումը՝ խորքային իմաստով ցուցանելով պատմական կարեւորագույն իրադարձության համակարգված ու ազգակենտրոն գնահատությունը հայ մտածողների աշխարհայացքում: Հարցի դրվածքում մի փոքր չափազանցված կարող է թվալ «համակարգված» եզրույթը, սակայն այն ուղղակիորեն առնչվում է մեր մշակույթի եւ հոգեւոր ստեղծումների ծագումնաբանությունը՝ ըստ էության Բալուի ավանդությամբ ոչ միայն տեղայնացնելով նշանագրերի ստեղծման օրրանը, այլեւ Աստծու մեծագույն շնորհի վայրը ներկայացնելով իբրեւ Հայրենիքի եւ հայկականության խորհրդանիշ: Բալուի հիշատակության բազմաթիվ դրվագներ կան մեզանում, սա-

¹ «Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին», աշխատասիրությամբ Հակոբ Քյոսեյանի եւ Վարդան Դերիկյանի, առաջաբանը՝ Հ. Քյոսեյանի, Երեւան, 2019, էջ 8:

կայն Գարեգին Սրվանձտյանցն իր «Թորոս Աղբար»² ուղեգրության մեջ կապակցում է իրենից առաջ եղած, ամենատարբեր հիշատակարաններում վկայված պատառիկներն ու կարծես խնդիր դնում. «Հայոց դպիրք, յո՛ւխտ գնացէք այս քարայրին, երկրպագէ՛ք Ս. Մեսրոպբայ դպրոցին»:

Երկու բառով անդրադառնանք նախասկզբնական պատումին: Հայոց գրերի պատմության երեք սկզբնաղբյուրներն են Կորյուն վարդապետի «Վարք Մաշտոցի» գործը, Մովսես Խորենացու, ապա Ղազար Փարպեցու «Հայոց պատմություն» աշխատությունները, որոնց մեջ՝ ի մասնավորի Կորյունի եւ Խորենացու երկերում՝ կապված սուրբ Մեսրոպին եւ սուրբ Սահակին անմիջաբար աշակերտելու, հայոց հոգեւոր «երկրորդ» Դարձի ականատեսն ու վկան լինելու նախամեծար իրողության հետ, բացառիկ երախտագիտությամբ ու խոնարհումով է օծված մեծ Ուսուցչի կերպարը, նրա գործը, որ նույնացվում էր աստվածային շնորհի ու առաքելության հետ: Փարպեցու «Պատմության» մասին ասվում է, թե սրա մեջ Մաշտոցին վերաբերող հատվածը մի որոշակի իմաստով թերի է ու անկատար, ըստ որոշ հետազոտողների՝ խմբագրված ու կրճատված, կամ առավելապես ուղղված է ծագումով պարթև, ազգությամբ հայ ու կրթությամբ հույն Սուրբ Սահակի անձն ու գործը ներկայացնելուն, քանզի նա «ազդեցիկ էր ծագումով, դիրքով ու անձով, որի գրական ճաշակն ու ըմբռնումները ձեւացած էին հույն մթնոլորտում»³: Մեսրոպի մեծագործությունը, սակայն, ուներ իր գոյաբանական ու իմացաբանական համարժեքը, որ քննելի է դառնում հետագա դարերում:

Հայտնի փաստ է, որ գրերի գյուտը, ըստ պատմագրության, կապվում է Միջագետքի, վկայումով՝ Ամիդ, Եդեսիա, Սամոսատ քաղաքների հետ: «Սկսած, սակայն, ԺԱ.—ԺԲ. դարերից,— գրում է Վարդան Դեւրիկյանը,— ապա եւ առավել ընդհանրացված ձեւով ԺԳ. դարից՝ ասվում է, թե գրերի բուն գյուտը տեղի է ունեցել Բալու լեռան վրա գտնվող մի այրում»⁴: Նշելով, թե պատմական սկզբնաղբյուրներին ավելացած մի շարք մանրամասները «կարեւորվում են գրական-մշակութային առումով, ցույց տալով, թե գրերի գյուտը ինչպես է վերամեկնաբանվել եւ վերաիմաստա-

² Տե՛ս ԳԱՐԵԳՐԵՆ ՎՐԳ. ՍՐՈՒԱՆՁՏՅԱՆՅ, Թորոս Աղբար Հայաստանի ճամբորդ, մասն Բ., Կ. Պոլիս, 1884: Այսուհետեւ հղումները կտրվեն սույն հրատարակության «Բալու» գլխից (էջ154—166):

³ Ն. ԱՂԲԱՆՅԱՆ, Երկեր, հտ. 4, Երեւան, 1970, էջ 229:

⁴ «Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին», էջ 28—29:

վորվել միջնադարում»՝ Վ. Դելրիկյանը Կարապետ Սասնեցու, Վարդան Արեւելցու, ապա նրանց հաջորդող հեղինակների օրինակով ներկայացնում է արդեն վաղ միջնադարում հայոց հավաքական ինքնագիտակցության ձևակերպած, վերացարկած խնդիրը: Գրերի գյուտի հետ կապված՝ Բալուի⁵ մասին առաջին վկայությունը հանդիպում ենք ԺԲ.—ԺԳ. դարերի հեղինակ Կարապետ Սասնեցու «Ներբողեան յաղագս վարուց եւ մահուան Ս. վարդապետին Մեսրոբայ»⁶ երկասիրության մեջ:

Բալուի մասին «Աշխարհացուցում» հակիրճ տեղեկությունն է թողնում Վարդան Արեւելցին՝ չմոռանալով տալ Մեսրոպ վարդապետի անունը⁷: Ապա «Պատմության» մեջ, ի շարս այլ կարեւորագույն իրադարձությունների, ներկայացնում է գյուտը: Վարդան Արեւելցին առանձնակի շեշտում է հայոց գրերի աստվածատուր եւ աստվածաշնորհ լինելը:

⁵ Երկու խոսք Բալուի մասին: Գտնվում է Հայկական Տավրոս լեռնաշղթայի հյուսիսային ստորոտին, Դերսիմի հարավային ծայրագավառում, Արածանիի (Արեւելյան Եփրատ) ստորին հոսանքի եւ նրա աջակողմյան վտակ Փերիի (Պաղին) միախառնման տեղում՝ շրջանաձեւ հարթավայրում: Արածանին երեք կողմից շրջապատում է քաղաքը, որը, խիստ ջրառատ լինելով, ամբողջապես թաղված էր ալգիների մեջ: Բալուից հարավ անտառապատ տարածություններ են: Նրա մոտակայքում են գտնվում Մեսրոպյան հայկական բերդի ավերակները: Ստեփանոս Ասողիկի վկայությամբ՝ Բալուն խիստ ավերվել է 995 թ. երկրաշարժից, բայց հետագայում վերականգնվել ու մինչեւ ԺԳ. դարի վերջերը շարունակել է բարգավաճել: Շրջակայքում կան պղնձի ու քարածխի հանքեր: Ժամանակին բալուն Չորրորդ Հայք աշխարհի (հնում՝ Ծոփք) Բալահովիտ գավառի կենտրոնն էր եւ գլխավոր բերդը: Թուրքական տիրապետության շրջանում իբրեւ գավառակ նախ մտնում էր Դիարբեքրի նահանգի՝ Արդանամադենի գավառի, ապա Խարբերդի նահանգի մեջ: Նահանգում Գարեգին եպս. Սրվանձտյանցի 1878 թ. նշած 44 գյուղերն էլ ունեցել են իրենց եկեղեցիները: 1903 թ. «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարանում» Հ. Էփրիկյանի նշած 48 գյուղից 31-ը եկեղեցի ունեն: Մինչեւ Մեծ եղեռնը միայն Բալու կենտրոնում գործել է հայ առաքելական չորս եւ ավետարանական մեկ եկեղեցի: 1914-ին ամբողջ գավառակում բնակչությունը կազմում էր 10 000 մարդ, ըստ Յ. Լեփսիուսի՝ 22 300 մարդ: Հատուկ ուշադրություն էր դարձվում կրթությանը: Եկեղեցական ծխական դպրոցներից բացի գրեթե բոլոր բնակավայրերի տարագիր գավակներն իրենց պարտքն էին համարում հայրենիքում դպրոցների հիմնումը, հոգում էին շենքային եւ կրթական ծախսերը: Այս առումով հետաքրքրական են հետևյալ հրատարակությունները. «Կանոնագիր Բալուի Շնազ գիւղի կրթասիրաց ընկերության» հիմնում 1902 թ. սեպտեմբեր 1-ին, Նիւ-Եօրք, 1908, հմմտ. «Կանոնագիր Բալուի Սղամ գիւղի դպրոցասէր երիտասարդաց միութեան», հիմնում 1903 թ. յուլիս 26-ին, Նիւ-Եօրք, 1910:

Տիրապետող Թուրքերի եւ քրդերի գլխաքանակի աճի հետ ժամանակի ընթացքում նվազել է Բալուի հայ բնակչությունը, վերացել են հայկական գյուղերն ու քանդվել եկեղեցիները: Կան նաեւ բազմաթիվ վկայություններ այս տեղավայրի աշխարհագրական գիրքի, բնակչության ազգային պատկանելության, քաղաքի պատմական հուշարձանների եւ հասարակական միջակի մասին:

⁶ ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ՍԱՍՆԵՑԻ, Ներբողեան յաղագս վարուց եւ մահուան Ս. վարդապետին Մեսրոբայ, Վաղարշապատ, 1897:

⁷ «Աշխարհացույց Վարդանայ վարդապետի», Բարիդ, 1960, Բ.:

«Պատմության» մեջ ողջ հմայքով հառնում է Մաշտոց—Մովսես զուգահեռը՝ գործի եւ ստեղծումի մեծության մեջ հայոց հանճարի մաքառումն ու մտքի ազատությունը նույնացնելով Աստծու հետ առնչվելու եւ հավիտենության ճանապարհը գտնելու հրաշքին: Եւ քանի որ, ըստ Արեւելցու, Մեսրոպի խնդիրն էր «փոխել զԱստուածաշունչ մատեանս ՚ի հայ բարբառ»⁸, երկար ճգնության ու տառապանքի փորձությունից հետո ողորմած Աստված շնորհելով շնորհում է հավատավորին ու Իր ձեռքով դաշում տառերը Բալուի այրում: Միանգամայն ակնհայտ է, որ միջնադարյան հեղինակները որոշակի միտումով են պատմագրության բնագիրը Բալուի ավանդության մեջ վերընթերցում: Կորյունը պերճ ու վսեմ ոճով էր ներկայացնում Մեսրոպի մեծագործությունը. «Եւ այնպէս բազում համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ: Որում պարգեւ էր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ Աջովն Իւրով նշանագիրսն հայերէն լեզուին»⁹, իսկ Բալուի գրեթե բոլոր պատումներում հայոց գրերն արդեն նյութականացված, առարկայական, այրի պատին Աստծու ձեռքով դաշած ենք տեսնում, ինչն ստույգ տրամաբանության մեջ ազգային իմացականության մեջ նրբորեն շրջանցում է գրոց տեսիլատուր լինելու պատմությունն ու գիրը նույնացնում Աստծու խոսքի, շարունակականության գաղափարի հետ:

Բալուի մասին, սակայն, առանց գրոց ավանդության հիշատակության, գրում է Դեւոնդ Ալիշանը¹⁰:

Բալուին անդրադարձել են Սիմեոն դպիր Լեհացին¹¹, Կոմիտաս քահանա Քյոմուրճյանը¹², հիշատակումներ կան «Յայսմաուրք»-ում, Մատենադարանում պահվող մի քանի ձեռագրերում¹³:

Բալուի ավանդությունը հետաքրքիր ձեռքով է ներկայացնում ԺԳ. դարի հեղինակ Մխիթար Այրիվանեցին իր «Սրբոց թարգմանչաց Սահակայ

⁸ «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ», Սուրբ Ղազար, 1862, էջ 49—50:

⁹ «Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելոյ սրբոյն Մաշտոցի վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորին վարդապետէ յաշակերտէ նորին», Լ., Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Երեւան, 1994, աշխատութեամբ՝ Ա. Մաթեոսեանի, էջ 90:

¹⁰ ՂԵՒՈՆԴ ՎՐԳ. ԱԼԻՇԱՆ, Տեղագիր Հայոց մեծաց, Վենետիկ, 1855, էջ 42(45):

¹¹ Տէս ՍԻՄՈՆ ԳՊԻՐ ԼԵՂԱՅԻ, Ուղեգրութիւն, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1934, թ. 3—4, էջ 159:

¹² Տէս G. ULUHOĞIAN, Un antica mappa dell' Armenia, Bologna, էջ 133:

¹³ Տէս «Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին», էջ 26—27:

եւ Մեսրոպայ» գործում: Նա, դարձյալ ըստ պատմական վավերագրերի, ներկայացնում է «Գրերի գյուտը»՝ անշուշտ իր աշխարհայացքով, նաեւ գանձի քերթողական արվեստի (պոետիկայի) ձեւույթով պայմանավորված, սուրբգրային որոշակի հղումներով համեմատություններ ավելացնելով Բալուի անձավի պատումին:

...Սահակ սրբասնեալ, կաթուղիկոս լեալ, ամս յիսուն ճըզնեալ:
 Ի Տարան յայտնեալ, Մաշտոց անուանեալ, Մեսրոբ կոչեցեալ:
 Սուրբ վարս ըստացեալ, վաթսուն համբակեալ՝ մերկ եւ բոկ շրջեալ:
 Յանապատ բնակեալ, զաշխարհ հոգացեալ, բայց յաղալթս յամեալ:
 Լեշկ մաշկ ըզգեցեալ, կարատեալ, նեղեալ, զորս աշխարհ չարժեալ:
 Ահա պահեա՛, Տէր, յանդորրութիւն զՔո ժողովուրդքս,
 Բարեխաւսութեամբ Սրբոց թարգմանչացն, աղաչեմք (ընգծումը.— Ս. Մ.):
 Աստ Հոգին ծագեալ, առերկունս ազդեալ, հայ գիր յարինեալ:
 Վառնապուն աւգնեալ, Վահրին գործակցեալ, Դանիել շնորհեալ:
 Քսան եւ ինքն գտեալ, նախնեացըն արարեալ, ամս երկու չհեգեալ:
 Բագում աշխատեալ, եւ ոչինչ աւգտեալ, ձեռն յԱստուած ձգեալ:
 Ի Բալու տըֆնեալ, Մեսրոբ արտասուեալ, աստ հեշտակ իջեալ:
 Անդ հոգի ջահեալ, գայլ գիրսն յարուցեալ, սիղոբայֆ հեգեալ:
 Բանն անմարմնացեալ, ի գիր մարմնառեալ, զիմաստըս պատմեալ...¹⁴:

Կայուն դարձվածքների գործածությունը բացառիկ զգայուն շրջանակ է ձեւավորում՝ Բալուն նմանեցնելով սրբազան մատուռի, ներսում աղոթող հավատավոր այրին՝ Մովսես մարգարեին:

Բալուի նկարագրություններից ամենամբողջականը թե՛ հստակ ձեւակերպված գաղափարով, թե՛ բնաաշխարհագրական, պատմական, ընկերային-ազգագրական հոսքերի զուգորդությամբ, թերեւս, Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցի «Ուղեգրութեան»¹⁵ հատվածներն են՝ համապատասխանաբար ամփոփված «Բալու» եւ «Բալուայ առաջնորդութեան հայաբնակ գիւղորայք» գլուխներում:

Առհասարակ Սրվանձտյանցի հավաքագրած նյութը, որ ճանապարհային յուրօրինակ քարտեզով ներառում է Արեւմտյան Հայաստանի բոլոր քիչ թե շատ կարեւոր տեղավայրերը, դրանց նկարագրությունն ու գույքագրումը, նյութական ու հոգեւոր ստեղծումների բազմադրաշ վկա-

¹⁴ ՄԽԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻ, Գանձեր եւ տաղեր, աշխատասիրությամբ է. Հարությունյանի, Երեւան, 2005, էջ 113—114:

¹⁵ ՏԷՍ ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ, Թորոս Աղբար ճամբորդ Հայաստանի, Կ. Պոլիս, 1884, էջ 154—155:

յուժները՝ վանքեր, եկեղեցիներ, խաչքարեր ու մատուռներ, հինավուրց գրքեր ու սրբագործված նվիրական անուններ, անխառն ու սքանչելի բանահյուսական կտորներ, ոչ միայն բացառիկ ազգագրական արժեք ունի, այլև աչքի է ընկնում գեղարվեստական չքնաղ շերտերով ու խորքային սուզումներով: «Թորոս Աղբարի» մեջ, բնաաշխարհագրական հայրենիքի մի կետի վրա ներկայացնելով Բալուն, Սրվանձտյանցը «մշակույթի» փիլիսոփայությունից վերացարկում է պատմության փիլիսոփայությունը՝ հայոց գոյաբանական պատումի մեջ առանձնակի դեր հատկացնելով քրիստոնեական մեր աշխարհայացքին ու ինքնաստեղծումի ունակությանը: Այդ բոլոր հոսքերը ներգաշնակորեն զուգահեռվում են այն վավերագիր գրվագներում, որոնք պատմում են հայոց հանճարի հանգրվանումի, սրբազան տեսիլքի ու գլուտի մասին: Սրվանձտյանցին բնությունն օժտել էր ստեղծագործական բացառիկ տաղանդով. ամենայն հավանականությամբ՝ գոնե իր ճանաչած աղբյուրներից ծանոթ լինելով իր այցելած վայրերի պատմական հիշատակարաններին, ավերակ ու նորոգ հուշարձաններին՝ սրբազան հայրը նախ մտքի աչքով է ճանաչում անցնելիք ճանապարհը՝ պատմության հուշերի մեջ որոնելով իրական, բայց ձեռքից հոսող, կորսվող Հայաստանը:

Ամենասկզբում նա իր խոսքն սկսում է իբրեւ սովորական ուղեգրություն կամ օրագրային պատում. «Օգոստոսի 28-ին յառաւօտուն մեկնեցանք Չարսանճագէն: Քղիի ջուրն անցնելով՝ անմիջապէս կ'սկսի Բալուայ հողն: Միշտ գառ ի վեր կը գնանք, եւ երկու կողմերնիս՝ ձորերու մէջ, լի են փոքրիկ գեղեր: Ուղեկիցներս կը ցուցնեն Բալուայ լեռները, կը տեսնանք գլորակ բարձր գլուխ մը: Քղիի Սրբլոս լեռն է»: Այսպես է հնախույզ մտավորական-եկեղեցականին ներկայանում Մշո դաշտը, որ «պահ մը կը յուզուի սիրտս Մշոյ յիշատակներով»: Հինգժամյա ճանապարհից հետո, որ անցյալի հիշատակների ու նախնյաց բնակավայրերի ավերակների ողբերգական պատկերներով ծանր խոհերով էր լցրել ճանապարհորդների հոգին, մուտք են գործում «Պալուաց աշխարհը», որին սրբազան հայրը ողջունում է մի փոքր թեթեւացած, նախապաշարված սիրով ու սրբազան տաճար այցելող ուխտավորի երկյուղածությամբ:

Միանգամայն ակնհայտ է, որ բնությունը, քարը, հողը, անձավը փոխադրվում են պատմության ոլորտ, եւ բացառիկ իմաստ է ստանում Սուրբ Մեսրոպի ստեղծագործ ու հավատավոր հոգու տիտանական մաքառումը: Սրվանձտյանը մեկ հատիկ բառով տալիս է մարդու եւ նրա

ահռելի գործի բնորոշումը՝ «Աստուածային»։ Բայց այդ մաքառման մեծությունը, կերտողական ոգու տքնանքը առավել քան իմաստավոր է դառնում անցյալ ու ներկա ժամանակների հակադիր պատկերներում։ «Մինչեւ Բալու հասնելը,— գրում է Սրվանձտյանցը,— կանխաւ որոշած էի, որ Հաւաւու Քաղցրահայեաց Ս. Աստուածածնի վանքը պիտի իջնայինք, ուխտ ընէինք, հանգչէինք եւ անցնէինք։

...Ահա Հաւաւու վանք, որոյ հայեացքը արդարեւ քաղցր, բայց մեր տեսածն էր խիստ դառն։ Ս. Տաճարն փոքրիկ եւ շատ սիրուն շէնք մէր, բայց միւս շէնքերուն մէջ խճողուած եւ կորսուած էր դրսէն։

...Վանքին ներսը ամենայն ինչ աւերակ էր, ապականութիւն եւ խառնակութիւն։ Չորս շուն, չորս քուրդ, երկու տնտես կանայք, հինգ կով, մէկ էջ եւ մէկ ձի եւ մի կաղ վանահայր՝ Մանուէլ վարդապետ»։ Զգացմունքի ու սիրո ճուղավառումը, որով սրբազան վարդապետը զգում է նախնիների ներկայությունն ու շունչը, փոխվում է ցավի՝ հանդիպելով իրականության թշվառ պատկերին. «Բաւական ձեռագիր մատեաններ կային վանքս, որոցմէ քանին հրաշագործ Սրբազանն վասն ի վերուստ ըրած էր, կ'ըսէին, զի այս այս տեղն ալ նստեր էր նա եւ հանրագրութիւն ժողվեր էր՝ զինքն առաջնորդ ընել»։

Խորքային ճանաչողությամբ ներկայացնելով ԺԹ. դարի Արեւմտյան Հայաստանի տնտեսական ու քաղաքական չարաղետ վիճակը, ավերված ու ոտնատակ եղած երկիրն ու կյանքի մշուշներում մի կերպ գոյություն քարշ տվող մարդկանց՝ Սրվանձտյանցը հայացքը հառում է անցյալի հեռուները՝ այնտեղ որոնելով մեր ինքնության հիմունքներն ու սրբագույն մասունքները։ Իսկ այդ մասունքների մեջ իբրեւ անկորնչելի արժեք է հառնում գրերի գյուտի ավանդությունը։ Ահա ժողովրդի կողմից Գրման քար անվանված սրբազան վայրի մոտ է գտնվում Սուրբ Մեսրոպի ճգնարանը, ուր տքնել, աղոթել ու տառապանքի երկար օրերից հետո աստվածային շնորհին է արժանացել հայոց ուսուցչապետը. «Քա՛ր, ո՛ր քարայր, Հայոց արեւուն լուսնակամար, ուստի ծագեցաւ մեզ ճառագայթ. «յոր խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց անեղին նկարագրեցաւ մեզ գիր կենդանի յարգանդ մաքուր մեծին Մեսրովբայ անմատոյց լուսոյն երկրպագեսցուք»¹⁶։ Միանգամայն ակնհայտ

¹⁶ ԳԱՐԵԳԻՆ ՎՐԳ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ, Թորոս Աղբար, Հայաստանի ճամբորդ, մասն Բ., Կ. Պոլիս, 1884:

է, որ Սրվանձտյանցը սովորական վիճակագիր չէ, ոչ անգամ բանահավաք, նա ուխտավոր է, որ փարված է իր բնաշխարհին, որ շոշափելի ու իրական է միանգամայն ու երբեւէ ճոխացել է հայոց ստեղծագործողութեւն եւ պատմութեան մեծագործութեամբ: Նա բանաստեղծ է, որ գրում է հայրենյաց մաքառման ու գոյութեան ավետարանը, որ զոնգուն գրիչ ունի ու ջերմացնում է մաքրամաքուր անկեղծութեամբ ու առ հայրենին ունեցած անընդգրկելի սիրով: Սրբազան վարդապետը, որ մի անգամ հող ու ջրին հանդիպած ժամանակ հուզական զմայլանքի մեջ, հայացքը երկնքին հառելու փոխարեն հողին էր խոնարհել ու աղոթել՝ «պաշտեմ քեզ, Հոգ...», անօրինակ հափշտակութեամբ է գրոց քարայրը ոտք դնում. «Ծունկերուս վրայ ինկայ հոն, ուր Սրբոյն ծնկները մաշուած էին, լզեցի այն քարեր ու փոշիները, յորս շրթունք եւ ճակատ Սրբոյն բիւրիցս քսուեր էին՝ նուիրելով իր խորհուրդն եւ իղձերը Աստուածային իմաստութեան, հոն դրի երեսներս, եւ չէի ուզէր վերցնել այն ժայռերէն, ուր նստեր, կոթներ, խոկալով եւ տքնելով Հայ ազգին եւ Հայաստանեայց եկեղեցւոյն լոյս եւ կեանք ճարելու ճգնութեամբ...»: Զգացմունքի ու սիրո յայսպիսի հուզավառ պատկերներով են կապակցվում «Թորոս Աղբարի» էլի շատ դրվագներ՝ պարզապէս կազմաքանդելով ուղեգրութեան ժանրային ձեւովը, պատումի բազմաթիւ էջեր հղելով գեղարվեստի տիրույթ, դառնալով ներքին միացնող կապի հատկանիշ: Բացառիկ խորքով ու գեղեցկութեամբ զուգահեռվող կտորների հաջորդականութիւնը ձեւակերպում է այն առաջադրույթը, գոյաբանական միջուկը, որ ուղիղ ձեւով առնչվում է Սրվանձտյանցի աշխարհայացքին ու հայրենապաշտութեանը: Հայոց հայրենիքի ուխտավոր-նվիրակը նույն ակնածանքով է ողջունում ծովը, պաշտում երկինքը, խոնարհվում հողին ու աղոթքի պէս շնչում իր սերը. «Ո՛վ իմ պաշտելի Շնորհալույս տուած ու առած, օրհնուած ու օրհնած, աղոթած ու երգած տեղի, տեսարան ու հանդիսարան...»: Որքան նվիրական ու սրբագործված է նրա համար Շնորհալու անունը, այդքան ինքնաճանաչման պէս է դառնում նրա ծնարանի ու քնարանի հետ հանդիպումը. «Քարերու զուխը քարացած մնացեր եմ, եւ ապա գետինը թաւալեցայ երեսացս վրայ: Կը փարիմ, կը գրկեմ, կը պագեմ, կ'սթափիմ, եւ, այլ աչերս չվերցուցի երկինք: Երկինքէն բարձր փառք մը գտած էի»:

Փիլիսոփայական ու պատմաքննական եզրագծերի մեջ առնված բուն անցքը՝ ստեղծումի պատմութիւնն ու Սուրբ Մեսրոպի կերպարը՝ հռչակ-

ված իր գործունեությունում ու սրբերի շարքը դասված իբրեւ եկեղեցու զինվոր ու առաքյալ, Սրվանձտյանցը նախ բացում է երկու հակադիր եզրով, ապա շրջում դեպի ներս: Մի կողմից՝ ժամանակի մեջ, ժամանակի ընթացքում գյուտը, ուսուցչապետի կերպարն առասպելականացվում են, ավելի ու ավելի անջատվելով իրենց պատմական հիմունքից՝ ձեռք են բերում խորհրդաբանական ամենատարբեր մեկնաբանություններ, մյուս կողմից՝ առարկայանում են՝ իբրեւ նյութական-բովանդակային իրողություն: Այդ երկու եզրն էլ երեւում են Սրվանձտյանցի խոսքի մեջ: Նրա բանաստեղծ հոգին, որ, ասելիքին համահունչ, շատ հաճախ է սուրբերային ու հոգեւոր բանաստեղծությունից վկայումներ անում, այս անգամ շարականի սրբալույս տողերն է պահին պատշաճ ու Մեսրոպի գործին վայել համարում. «Որ զանմարմին պարունակող բանին զգրաւորական զիմաստ հոգւոյն շնորհէր որդւոց Թորգոմայ, յայտնեալ տեսլեամբ ի ձեռն սուրբ... նմանեալ Մովսէսին, բերելով զգիր օրինաց ի Հայս, որով լուսաւորեցան ազգ որդւոց Թորգոմայ»: Նախ նա վկայաբերում է Մովսէս մարգարե — Սուրբ Մեսրոպ զուգահեռը, որ, սկզբնավորվելով Խորենացու եւ Կորյունի երկերում, նույնքան «հավանական» ու գեղեցիկ է խոսվում ժԹ. դարում. «Եւ եկեալ երանելոյն Մեսրոբայ Հայոց վարդապետի, եւ բերեալ զնշանագիրս մերոյ լեզուիս առ Սուրբ Սահակ Հայոց, առ Թագաւորն Հայոց Վռամշապուհ, յոյժ ուրախ լինէին որպէս ընդ տախտակս աստուածագիծս»¹⁷: Եթե պատմագրության մեջ, պայմանավորված պատմիչի (իմա՝ Կորյուն) անձով, աշխարհայացքով ու պատումի խնդրադրությամբ, Մովսէս նախամարգարե — Մեսրոպ զուգահեռը միանգամայն բնական է ընկալվում, ապա Սրվանձտյանցի գործում այն անկասկած իմացաբանական ելակետ ունի: Մաշտոցի սխրագործության մեծությունը արարչության պարգեւ է՝ մարդու ձեռքով արարյալ, քրիստոնեական մեր աշխարհայացքի ու ոգու ելակետը, ազգային անհատականության մեր հատկանիշը. «Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարճանայր յէջս Սինէական լերինն. չասեմք թէ առաւելաքն՝ պակասագոյն: Քանզի յԱստուծոյ առեալ եւ աստուածագիր հրաման ի բազուկս՝ այրն աստուածատես ի լեռնէն իջանէր. Այլ վասն վրէժագործ ժողովրդեանն, որոց թիկունք ի տէրունիսն եւ կործան յերկիր, տիրադրուժք յիրեանց կուռս ձուլածուին երկիր պագանէին, եւ զնորին հրամանաբերն սրտառուչ սրտաբեկ լա-

¹⁷ ԿՈՐԻՒՆ, նշ. աշխ., աշխատութեամբ՝ Ա. Մաթեոսեանի, Երեւան, 1994, Թ.:

ցուցին. քանզի ի տախտակացն խորտակելոց յայտնի եղեալ տեսանէք բերելոյն թախծութիւն»¹⁸: Վարդան Դերիկյանն այս առիթով գրում է. «....Բալուի ավանդուծյան մեջ արդեն ոչ թե հոգեվիճակների տարբերությունն է ներկայացվում, այլ գլուտի իրավիճակային ընդհանրությունը, որով թե՛ Մովսեսին եւ թե՛ Մաշտոցին աստվածատուր պարգեւը տրվել է լեռան վրա, եւ Ս. Մեսրոպը, այնտեղից գալով, իր հետ բերել է հայոց գրերն այնպես, ինչպես Մովսեսը Սինա լեռից՝ Տասնաբանյան»¹⁹:

Մովսես—Մեսրոպ գուգահեռի վկայաբերումն իր ուղեգրության մեջ Սրվանձտյանցը ներկայացնում է իմաստուն ու խորքային նպատակաբանությամբ: Գրեթե նույն հավատավոր համաբանությամբ, ինչպես որ միջնադարյան պատկերագրության մեջ Մովսեսը երեւում է երկու դեմքով՝ Քրիստոսի հետ նույնանալով, այդպես էլ փոխանցված ավանդուծութով՝ սրբազան վարդապետի մտքում նույնանում են նախամարգարեն ու հայոց մտքի հանճարը: Եթե Մովսեսը տեսավ անկեզ մորենին ու լսեց Աստծու խոսքը, Մեսրոպը ճանաչեց Գիրը եւ կարդաց Աստծու խոսքը, եթե Մովսեսը «հաց տվեց ժողովրդին», Մեսրոպը տվեց կյանքի, ինքնության հացը, մարգարեն փրկեց նյութական, գոյավոր Իսրայելը, Մաշտոց փրկում է հոգեւոր Հայաստանը (Եկեղեցին) այլադավան ստրկությունից կամ ուծացումից... իմաստի Հայտնության ճանապարհը, իհարկե, երկար էր, շատ երկար, սակայն այն, ինչն աստվածատուր ու աստվածաշնորհ է, չի կարող կորնչել, ոչնչանալ, սպառվել...

Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցը հայոց գրերի տիրատուր լինելու իրողությունը Բալուի ավանդուծյան մեջ մի քանի դրույթով է վկայում: Եթե պատմահայրը գրերը տեսիլով տրված է համարում. «Առ սա (Հռոփանոս) երթեալ Մեսրոպայ, եւ յայսմ եւս անշահ մնացեալ՝ յաղօթս ապաւինի: Եւ տեսանէ ոչ ի քուն երազ եւ ոչ յարթնութեան տեսիլ, այլ ի սրտին գործարանի երեւութացեալ հոգւոյն աչաց թաթ ձեռին աջոյ՝ գրելով ի վերայ վիմի. զի որպէս ի ձեան վերջք գծին կուտեալ ունէր քարն: Եւ ոչ միայն երեւութացաւ, այլեւ հանգամանք ամենայնին որպէս յաման ինչ ի միտս նորա հաւաքեցաւ»²⁰, ապա Սրվանձտյանցն առարկայական, նյութեղեն է ներկայացնում դրանց ծնունդը՝ իրեն ուղեկցող քահանայի

¹⁸ Անդ:

¹⁹ «Հայ մատենագիրները Հայոց Գրի եւ Թարգմանչաց մասին», էջ 30:

²⁰ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, էջ 326:

շուրթերին դնելով նախասկզբնական պատումի վերախմբագրված տարբերակը. «Ս. Մեսրոպյան դպրոց կ'անուանեն այս քարայրը,— ըսաւ տէր Մեսրոպը,— եւ կ'աւանդեն, թէ ծակէն էլած է Թաթը եւ այս տաշածոյին վրայ գրեր է Ա. Բ. Գ.»։ Միանգամայն ակնհայտ է, որ Սրվանձտյանցն ընդունում է, թէ հայոց գրերն աստվածային ձեռքով գրվեցին Բալուի սալի վրա, այլ ոչ իբրեւ տեսիլք ներկայացան մեծին. «Արդարեւ, երբ այդ տախտակին յառէր խոկալով Սուրբն իր ուշքն ու աչքը, պէտք էր, որ այս անկեան ծակէն ելնէր Թաթն եւ գրէր «ոչ իբրեւ ի քուն երազոյ», այլ բացորոշ յայտնութեամբ Աստուածային»։

Այս դրվագի առիթով հետաքրքիր դիտարկում ունի էմմա Կոստանդյանը։ «Սակայն Սրվանձտեանցը,— գրում է նա,— չնայած վարդապետ, բարձր է գնահատում գիտնական Մեսրոպին։ Նա անձամբ եղել է ճգնառանում, մանրամասն նկարագրել նրա բոլոր պատերը, որոնց վրայ գտնուող բեւեռագրերը ստիպում են նրան եզրակացնել, որ այն աւելի հին է, քան Մեսրոպի յայտնագործութիւնը։ Ուրեմն, աւելի բարձր է Մաշտոցի կատարած գիտական գործի արժէքը»²¹։ «Կան երկու այլ քարայրեր ալ։ Միոյն մէջ կը գտնուի ջրի հոր մը։ Ասոնց մէջը խոռնկի եւ մոմի մուխերը սեւցուցած են, մանաւանդ ճգնարանին, ուր բարեպաշտօն կանայք կ'երթան, կ'աղօթեն իրենց զաւակաց համար։ Աւելորդ է ըսել, թէ Ս. Մեսրոպը պատրաստ գտած է այս այր ու վայրը, որ իրմէն յառաջ ո՞վ գիտէ ի՞նչ նպատակի համար կուեր կոփեր են։ Դուրսի բեւեռագիրն ալ մտածել կուտայ, թէ շատ հինուց գործ է, թերեւս յիշատակարաց դիւանը կազմելու մտքով տաշուած լինին։ Եթէ այսպէս, զուգահիւսութիւն մ'է Ս. Մեսրոպին»,— «Բալուի» այս կտորը նկատի ունի Կոստանդյանը, ինչը, իր կարծիքով, աներկբա առնչվում է ձայնավոր հնչյունների՝ տիեզերական անընդհատության, աստվածային ձայնի պատումին, որի մասին հիշատակեցինք վերելում։ Ինչեւէ։

Մի զարմանալի գեղեցկախոսութեամբ ներկայացնելով Բալուի անձավի եւ այնտեղ քառասուն օր ճգնած ու Աստծու բարեհաճութեանն արժանացած մեծ հավատաւորի սիրագործութիւնը՝ վարդապետը բացառիկ քավութեան (կատարսիս) մեջ է լուծում դրույթը. հայոց պատմութիւնը, մեր գոյաբանական ասքը լիքն են մաքառումների ու ինքնաստեղծման

²¹ Է. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ, Գարեգին Սրվանձտյանց. կյանքը եւ գործունեությունը, Երեւան, 2008, էջ 171։

այսպիսի դրվագներով, մեր բնությունը, հողը, եզերքը կրում են պատմության հիշողությունը, ժողովուրդը՝ քրիստոնեական աշխարհայեցության ու մշակույթի ժառանգական ծածկագիրը: Եւ ուրեմն որտեղ եւ երբ շրջվեց մեր կենսագրության անիվը, եւ ուրեմն մինչեւ երբ եւ ուր պիտի շարունակվի մեր անկումների ու մարումի ծանր ողբերգությունը. Արեւմտյան Հայաստանի չարաղետ իրավիճակն ու օրեցօր վատթարցող ազգային կացությունը Սրվանձտյանցի միտքը տրոհում են դառը խոհերով, անցյալի ու ներկայի ցավագին համեմատություններով: Այստեղ արդեն առնչվում ենք նրա՝ բարենորոգումների ու լուսավորական հասարակահայեցությանը, որ մեծ հայը փայփայեց ամբողջ կյանքում՝ երբեմն հասնելով լուրջ հաջողությունների, ավելի հաճախ՝ հիասթափության:

Բալուրի պատումը Սրվանձտյանցն ավարտում է առաջին հայացքից գրոց ավանդության հետ աղերս շունեցող մի դրվագով: Բալուրի ամենամեծ ու նշանավոր գյուղի՝ Հավավի մոտ ճանապարհորդներն անակնկալի են գալիս. «Գեղին բոլորտիքը բարձր խաչքարեր կան տնկուած՝ նման մահարձանաց կամ ցասման խաչերու, զօրս օծեր եւ տնկեր են ի պահպանութիւն ժանտամահէ եւ երկրաշարժէ, որոց յաճախ ենթակա եղած է գեղն յառաջնումն»: Սրբազան վարդապետը գյուղում պատմվող ավանդությամբ միացնում է ծայրերը գրերի գյուտի եւ քրիստոնեության. «Բայց բնակիչք իբր աւանդութիւն կ'ըսեն, թէ երբ Թադեոս առաքեալն եկեր այս գեղը քարոզելու, գեղի կռապաշտ մարդիկ, ծաղրելու համար զառաքեալն, ելեր են առջեւն ու ետեւը «հա՛ւ, հա՛ւ» ձայնելով, շան պէս հաչեր են: Ս. Առաքեալն անիծեր զիրենք, որ իրենց մարդկային բարբառը կորսնցուցեր են եւ ինչ որ խօսին եղեր «հա՛ւ, հա՛ւ» միայն կ'ըսեն: Ուստի գաւառացիք զիրենք անուաներ են հաւհաւցիք: Աստի է մնացեր գեղին անունը: Յետոյ զղջալով՝ Ս. Առաքելոյն դիմեր են, որ գեղն եկեր, զիրենք օրհներ, մկրտեր, բժշկեր եւ այս խաչքարերն օծեր, դրեր է գեղին շուրջը»: Հայտնի փաստ է, որ Դ.—Ե. դարերի գրեթե բոլոր նվիրական սրբավայրերը, որ առնչվում են Գրիգոր Լուսավորչին, ավելի ուշ՝ Սուրբ Մեսրոպին, որոշակի ավանդությամբ կապվում են առաքելական շրջանի, ի մասնավորի՝ Թադեոս առաքյալի եւ Աստծու խոսքի քարոզչության հետ: Դ.—Ե. դարերի ազգային նշանակալից իրադարձությունների հիմքում Թադեոս առաքյալի քարոզչությունը դնելու ավանդույթն սկսվում է Մովսես Խորենացու «Հայոց պատմությամբ»: Պատմահայրն իր մատչանի երրորդ մասի ԻԴ. գլխում գրում է, թե երբ Անակը գալիս է Հայաստան՝

Խոսքով Մեծին սպանելու դավադիր ծրագրով, ճանապարհին՝ Արտազ գավառում, հանգրվանում է առաքյալի մարմնի ամփոփման տեղում: Գիշերը նրա կինը մեջքը գետնին է դնում եւ Անակից հղիանում է ճիշտ այն տեղում, ուր սրբազան նահատակի շիրիմն էր: «...Արդ՝ ի բնակելն Անակայ ի դաշտին Արտազո՛ւ՝ պատահէ նմա տեղի օթարանին մօտ առ դիրս սրբոյ Առաքելոյն, որպէս թէ ի ներքսագոյն սրսկապանի խորանին. եւ անդ ասեն զլուծիւն մօր սրբոյ եւ մեծի մերոյ Լուսաւորչին: Վասն որոյ եւ զնորին Առաքելոյ շնորհսն ընկալեալ որ առ հանգստարանաւ նորին զլինելութիւն էառ՝ զնորին ելից զհոգեւոր մշակութեանն պակասութիւն»²²,— դեպքն այսպէս է վկայաբերում Խորենացին:

Պատմահոր բնորոշմամբ՝ հենց այս պահին է Սուրբ Գրիգորին փոխանցվում առաքելության շնորհը, եւ, հայոց աստվածաճանաչության ընթացքում, Լուսավորիչը լրացնում է այն, ինչ պակաս էր մնացել սուրբ Թադեոսի նահատակության: Հարկ է նշել, որ այն, ինչ ժողովուրդը ենթագիտակցորեն է ներկայացնում՝ որպէս նիրհած հիշողություն, Սրվանձտյանցը վեր է հանում ազգային-հոգեւոր խորհրդի նշանակության:

Անցյալի հոգեւոր ավանդույթի շարունակականության նույն սկզբունքով է թերեւս պայմանավորված Բալուի հենց այս քարայրի ընտրությունը, որտեղ ուրարտական բեւեռագրեր կան, որոնք խորհրդանշում են Հայաստանի հեթանոսական անցյալը եւ աստվածատուր հայոց գրերի են փոխվում նույն այրում սուրբ Մեսրոպի աղոթքով, ճգնությամբ, տեսիլով: Ազգագրագետի նուրբ դիտողականությամբ՝ Սրվանձտյանցը վկայում է այս ավանդությունը՝ անհամեմատ ավելի խորքային իմաստ տալով դրան, քան ունի ժողովրդի մեջ տարածված բանահյուսական պատումը:

Այս պատմությունը հիմք է տալիս բնության, հողի (տեղանքի) ու ոգու ճանաչողությանը՝ խիստ տեղայնացված իրադարձություններով ու անուններով: Սուրբ Թադեոսը, այս վայրերում քարոզելով, տեղաբնիկ հայերին հավատացրել է, թե գոյություն ունի մի Աստված՝ երկրի ու երկնքի Տերը, առաքյալը Հայաստան աշխարհը սրբագործել է Քրիստոսի ուսմունքով ու մարդկանց հորդորել, թե հողը շենանում է իր մարդկանցով ու իր Աստծով: Թադեոսից հետո այս վայրերում դժվար են ընդունել նոր Աստծուն, չեն հասկացել Բանը, մինչեւ որ այդ նույն տեղում աղոթել, ճգնել ու տառապել է Սուրբ Մաշտոցը, որ գիտեր, թե «անհրաժեշտ էր,

²² Մովսէս Խորենացի, Պատմութիւն հայոց..., էջ 212:

որ սրտի մեջ բնակվեր Միտքը» (Հ. Քյուսեյան): Այստեղ Գարեգին վարդապետ Սրվանձտյանցը փակում է շրջանակն ու ավարտին հասցնում Բալու եկած առաքյալի եւ գրերի գյուտի պատմությունը:

Ամփոփենք: Հայոց գրերի ստեղծման օրվանից մեր ժողովուրդն իր կենսագրության այս կարեւորագույն դրվագը վիպել է ամենատարբեր մեկնաբանություններով ու վերընթերցումներով: Դրա գոյաբանական ու իմացաբանական համարժեքը ժամանակի ընթացքում ճանաչողական նոր հարցադրումներ է ներառել՝ ուղիղ իմաստով առնչվելով ժողովրդի պատմության, քրիստոնեական աշխարհայացքի, դրանից ածանցվող հոգեւոր ու նյութական ստեղծումների ու ազգային անհատականության ամենատարբեր հարցադրումներին: Գրերի գյուտին ամենագեղեցիկ ու խորքային-նպատակամետ անդրադարձներից է Բալուի անձավի եւ Սուրբ Մեսրոպի՝ այդ այրում գիրն ստեղծելու ավանդությունը, որին անդրադարձել է եւ Գարեգին վարդապետ Սրվանձտյանցը: Արեւմտյան Հայաստանի ուխտավոր ճամփորդը, որ կորստից ու ոչնչացումից փրկում էր մեր պատմության հուշիկներն ու պատառիկները, ամենատարբեր տեղավայրերի, բերդերի ու ավերված պալատների, եկեղեցիների ու մատուռների, մարդկանց նվիրական անունների ու նրանց մեծագործությունների վկայումով ոչ այնքան փորձում էր հիշատակել գործքն ու փառքը նախնյաց, որքան փրկել ներկան: Փորձում էր կապակցել (եւ կապակցում է) ընդհատված պատմության օղակները, անցյալը եւ ներկան՝ նաեւ Բալուի եւ Սուրբ Մեսրոպի պատմությամբ:

РЕЗЮМЕ

Со дня создания армянского алфавита наш народ дал многочисленные свидетельства духовной и материальной культуры, благодаря чему мы могли оценить в полной мере изобретение письма Св. Месропом Маштоцем. Это важнейшее событие интерпретировалось с разных точек зрения: от исторических свидетельств до интерпретаций библейских мотивов и символических знаков, от исследования фольклорных текстов до литературных и художественных воплощений. Интересна легенда о пещере Балу, согласно которой Бог, услышав долгие молитвы и просьбы Месропа Маштоца изобразил армянские буквы на камнях одной из гор в провинции Балу. Предметом нашего исследования явля-

ется документальная повесть «Балу» известного армянского фольклориста-этнографа, общественно-литературного деятеля второй половины XIX века, Гарегина Сrvандзтянца, включенная в опубликованный в 1884 году сборник хождений Тороса. Представляя божественное начало создания письменности в пещере Балу, Сrvандзтянец сначала локализует место захоронения Маштоца, связывая это историческое событие с данной местностью, показывает его этимологическую и онтологическую значимость, однако затем абстрагирует историческую философию от философии культуры.

SUMMARY

Since the creation of the Armenian alphabet, our people have provided numerous evidences of spiritual and material culture, thanks to which we could fully appreciate the creation of the alphabet by St. Mesrop Mashtots. This important event has been interpreted from different points of view: from historical evidences to interpretations of biblical motifs and symbolic signs, from the study of folkloric texts to literary and artistic personifications. There is an interesting legend about the Balu cave, according to which God, hearkening to the long prayers and requests of Mesrop Mashtots, depicted the Armenian letters on the mountain stones of Balu province. The subject of our research is the documentary story “Balu” by Bishop Karekin Srvandztiants, famous Armenian folklorist-ethnographer, public and literary figure of the second half of the 19th century, included in the collection of Toros’ travelogues published in 1884. Presenting the divine origin of the creation of the alphabet in the Balu cave, Srvandztiants first localizes the burial place of Mashtots, linking this historical event with this locality, shows its etymological and ontological significance, then abstracts historical philosophy from the philosophy of culture. We analyzed Srvandztiants’ story both from historical and literary point of view and assessed its undeniable artistic value.

